# ՏԵՂԵԿԱՆՔ

## Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի սեպտեմբերի 13-ից գումարված հերթական նիստերի մասին (13.09.21թ-15.09.21թ)

| N ը/կ | Հարցի անվանումը | Հեղինակը | Ծանոթություն |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | «Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» | «Հայաստան» խմբակցություն **Խ-001-13.08.2021, 10.09.2021-ՊԻ-012/0 Աղվան Վարդանյան** | «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը հայտարարեց, որ խմբակցությունը չի մասնակցի քվեարկությանը:<br><br>30 կողմ, 0 դեմ,<br>0 ձեռնպահ ձայներով որոշումը չի ընդունվել |
| 2. | Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին հաղորդում | **1010-28.07.2021 ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկուչյան** | ԱԺ-ն ընդունեց ի գիտություն |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| **3.** | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի ընտրություն | **016-03.09.2021-** Մրցութային խորհրդի որոշման հիման վրա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում առաջադրվել է Մարիամ Գալստյանի թեկնածությունը | Գաղտնի քվեարկությանը 107 պատգամավորներից մասնակցեցին 67-ը: 66 կողմ, 1 դեմ ձայներով Մարիամ Գալստյանն ընտրվեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ: |
| **4.** | Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուի ընտրություն | **983-25.05.2021** Բարձրագույն դատական խորհուրդը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի թափուր տեղի համար առաջադրել է Հովսեփ Բեդևյանի, Հրաչ Այվազյանի, | Գաղտնի քվեարկությանը 107 պատգամավորներից մասնակցեցին 88-ը, անվավեր 1 քվեաթերթիկ:<br><br>Հրաչ Այվազյան - կողմ՝ 1<br>Հովսեփ Բեդևյան - կողմ՝ 80<br>Լիանա Հակոբյան - կողմ՝ 6<br><br>Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածու ընտրվեց Հովսեփ Բեդևյանը: |

| | | | |
|---|---|---|---|
| | | Լիանա Հակոբյանի թեկնածությունները: | |

**Սեպտեմբերի 13-15-ի նիստերի ընթացքում՝**

- Հայտարարությամբ հանդես եկան 17 պատգամավոր,
- 28 պատգամավոր բանավոր հարցերով դիմեցին կառավարությանը: